



Ծննդյան

*Կարող աչքեր հոր աչք ձեռք,
հոր աչքից եր աչք նրա,
հոր աչք կողմից փառքի լույսի:
Ծնողի ծոցում ծագում է նա՝
կույսից ծնվում ծոցի ծաղիկ,
հանց արեւից սիրո համար:
Օրի ծաղիկը հայրական
ամոթի մեծ իջնում երկնից,
յուր սերը մեզ ցողում ֆաղցրիկ:
Նման գեղմի՝ այդ սիրաշարժ
ամոթից սերը ցողում է օդն,
ինչդեռ շիրթեր անմեղի:
Սիրուց է սերը ճանաչվում,
սիրաբողբոջ սենյակ լցվում,
սերը սիրով միաբանվում:
Ամբողջ փայլով լի լուսինը
դեռ ճեմում է, արուսյակը
ճեմում հեռից՝ վառ աստղերով:
Առավոտյան ցողն է իջնում,
արուսյակը այգն է բացում
ֆաղցր արեւով նոր Սիոնի:
Գարունաբեր օրերն ահա
գեղգեղում են վայելչացած,
կարծես լինի նոր հարսանիք:
Եկե՛ք, մենք էլ զվարճանանք,
թափ փայլուն սերունդից
հյուսենք դալար, նուրբ դասակներ:*

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿՍԻ

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

ԵՐԵՎԱՆԻ, 29 ՂԵԿՏԵՄԲԵՐԻ 2015Թ.
№ 34 (376)



Շնորհավոր Նոր Տարի եւ Սուրբ Ծնունդ

Գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյան.
**«Մեզ համար չկա վաղ եղանակ, չկա դժվարին
իրավիճակ, մեզ համար կա առաջնային շփման
գիծ, որը գտնվում է հուսալի ձեռքերում»**

Նարգարույց

Հայոց պետական սահմանի տիրող
իրավիճակի, ազգային բանակի մար-
տունակության, առաջիկա մարտահրա-
վերների մասին է զրույցը ԳՂ 4-րդ
բանակային կորպուսի հրամանատար,
գեներալ-մայոր Անդրանիկ Մակարյանի
հետ:

– Պարո՞ն Մակարյան, Դուք ղեկա-
վարում եք Հայաստանի Հանրապետու-
թյան սահմանի՝ ռելիեֆային առումով
ամենաբարդ, այսպես ասած, ճախիջեա-
նյան հատվածը: Գնահատե՞ք, խնդրեմ, սահ-
մանի օպերատիվ-մարտավարական վիճա-
կը:

– Ձեր նշած հատվածում օպերատիվ-մար-
տավարական վիճակը գտնվում է հուսալի եւ
վստահ ձեռքերում, որովհետեւ հատկապես
վերջին մի քանի տարվա ընթացքում արել ենք
ամեն ինչ, որ շփման գծի անվտանգության
հուսալիությունը լինի մի քանի անգամ ավելի
բարձր եւ մարդկային ռեսուրսի, եւ ինժեներ-
ական, եւ սպառազինության ու տեխնիկայի
տեսանկյունից: Ամեն բայլ ձեռնարկել ենք, որ
ցանկացած իրավիճակում ունենանք հուսալի
պաշտպանություն, իսկ հուսալի պաշտպա-



նությունը վստահ հարձակումն է: Վստահ հար-
ձակում, որովհետեւ մեր դիմաց պատմական
Նախիջեանն է, որտեղ մեր հարեւան իշխա-
նություններն արեցին ամեն ինչ, որ հայի հետք
չմնա: Ի նկատի ունեն այն վայրագություննե-
րը, որոնց հետեւանքով ոչնչացվեցին 4500
տապանաքար, 23 հազար գերեզմանաքար ու

խաչքար, 281 եկեղեցի, մեծ քանակությամբ
բնակատեղիներ. մենք ինչպե՞ս կարող ենք
ներել նրանց: Դեմ դիմաց մեր պատմական
հայրենիքն է, որի գաղափարը պիտի լինի մեր
գիտակցության մեջ, եւ դա մատուցենք ապա-
գա սերունդներին՝ այն ազատագրելու նպա-
տակով:

– Այս տարվա գարնանը բավականին
մեծ աշխատանք կատարվեց Սյունիք-Նա-
խիջեան սահմանի այն դիրքերը բարելա-
վելու ուղղությամբ, որտեղ մարտերի ժամա-
նակ զոհ ունեցանք, բայց դրա հետ միասին
հակառակորդին ջարդեցինք բառիս բուն
իմաստով՝ պատճառելով մեծ վնաս: Պե-
տական սահմանը Նախիջեանի ուղղու-
թյամբ ամբողջովին վերականգնված է,
թե՞ եղանակային պայմանները կարող են
խնդիրներ առաջացնել նորից:

– Մեզ համար չկա վատ եղանակ, չկա
դժվարին իրավիճակ, մեզ համար կա
առաջնային շփման գիծ, որը գտնվում է
վստահ եւ հուսալի ձեռքերում, որը վերջին
տարիներին ամրապնդվել է, եւ ստեղծված են
բարենպաստ պայմաններ հետագա գործողու-
թյունների համար:

– Վերջին շրջանում աշխարհի մասշ-
տաբով ռազմաքաղաքական իրադարձու-
թյունները թուրքիայում եւ հատկապես
Ադրբեջանում ակտիվություն առաջացրին.
պատերազմի հռետորաբանությունն է շա-
տացել: Ինչպե՞ս են ընկալվում զինվորների
շրջանում, բարձր սպայական կազմում այդ
հոխորտանքները, թշնամու կողմից պատե-
րազմի վերսկսման ակտիվ քարոզը:

– Եթե կա աշխարհում մի բանակ, որ 21
տարի անընդմեջ, գիշեր-ցերեկ գտնվում է
խրամատներում, կրակոցների տակ, դա մեր
բանակն է: Մեզ համար սահմանի լարվա-
ծությունը սովորական երեւոյթ է եւ պետք չէ

**Նախագահը
խորհրդակցություն
է հրավիրել Սյունիքի
մարզի սոցիալ-
տնտեսական
իրավիճակը
եւ մարզային
գերակայությունները
քննարկելու
Նպատակով**

Պաշտոնական

Նախագահ Սերժ Սարգսյանը դեկտեմ-
բերի 11-ին Սյունիքի մարզպետի եւ
մարզպետարանի պատասխանատու-
ների մասնակցությամբ խորհրդակցու-
թյուն է անցկացրել Սյունիքի մարզի
2014թ. եւ 2015թ. հունվար-սեպտեմբեր
ժամանակահատվածի սոցիալ-տնտե-
սական իրավիճակի, առկա հիմնախն-
դիրների, գերակայությունների եւ
գարգացման ծրագրերի քննարկման
նպատակով:

«Ես մի քանի շաբաթ առաջ եմ եղել
Սյունիքում եւ ամենքս ծանոթացել իրակա-
նացված աշխատանքներին, մասնավորա-
պես՝ Կապանում եւ զգացել եմ այն դրական
ազդեցությունը, որ այդ աշխատանքներն
ունեցել են ինչպես, ընդհանուր առմամբ,
քաղաքային միջավայր ձեւավորելու, այն-
պես էլ մարզի արդյունաբերության, տնտե-
սության զարգացման առումով: Որպեսզի
կարողանանք լուրջ եւ եական զարգացում
ապահովել, մենք պետք է կարողանանք
պահել ու պահպանել եղածը: Ինչո՞ւ եմ այս
խնդիրն ուշադրություն դարձնում, որով-
հետեւ կասկած չունեն, որ ձեզ էլ է հայտնի
միջազգային շուկաներում մետաղի գների
անկման հետեւանքով հանրապետության
լեռնահանքային արդյունաբերության ոլոր-
տում, մասնավորապես՝ Սյունիքի կոմբի-
նատներում ստեղծված դժվարին իրավիճա-
կը: Իհարկե, մենք շնորհակալ պետք է լինենք
սեփականատերերին, այդ կոմբինատներում
աշխատող կոլեկտիվներին, որոնք ամեն ինչ

ԽՈՍՏԵՆՆԵՐԻ ՍԱՐԿԱՆԵՐԻ ԱՄՈՒՆՅԱՆ ԿՆՆՈՒՄԸ



ՍՈՒՐԵՆ ԽԱՉՆԱՅՐՅԱՆ
Սյունիքի մարզպետ

Սիրելի՛ սյունեցիներ
Պատմության գիրկն է անցնում 2015 թվականը: Կարծում եմ՝ անցնող տարին մեզ համար բարենպաստ տարի էր. 2015 թվականին մեզ հաջողվեց բավականին աշխատանքներ կատարել, մենք կարողացանք կառուցել, բարելավել ու նորոգել առողջապահական կենտրոններ, դպրոցներ, մանկապարտեզներ, զգալի աշխատանքներ իրականացնել ճանապարհաշինության մեջ: Մի խոսքով՝ 2015 թվականին մեզ հաջողվեց անել հնարավորը՝ լուծելու մեր առջև դրված առաջնահերթ խնդիրները: Համոզված եմ,

որ 2016 թվականին ավելին ենք անելու և այսօր ունենք արդեն բազմաթիվ հաստատված ծրագրեր: Մի քանի օր առաջ Հայաստանի Հանրապետության նախագահի մոտ քննարկումներ եղան մարզի սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ, և համապատասխան հանձնարարություններ ստացանք եւ մենք, եւ համապատասխան կառույցները: 2016 թվականին Սյունիքում բավականին լուրջ աշխատանքներ են իրականացվելու տարբեր ոլորտներում՝ թե՛ դպրոցաշինության մեջ, թե՛ գյուղական համայնքներում ջրագծերի կառուցման, թե՛ ճանապարհաշինության և թե՛ մշակութային օջախների, մանկապարտեզների վերանորոգման ուղղությամբ:

Համոզված եմ՝ գալիք տարին կլինի առավել բարենպաստ:

Ես սրտանց շնորհավորում եմ բոլորիդ Ամանորն ու Սուրբ ծնունդը, բայց առանձնահատուկ կուզեմայի շնորհավորել հայրց բանակի զինվորներին ու սպաներին, ովքեր այսօր անձնուրաց եւ խիզախաբար կարողանում են պաշտպանել Հայաստանի ու Արցախի սահմանները:

Թող Ամանորն ու Սուրբ ծնունդը սյունյաց յուրաքանչյուր օջախի պարզեւն առատ ու տոնական սեղաններ, բարձր տրամադրություն և սեր, համայն հայությանը, Հայաստան աշխարհին՝ շենթություն և խաղաղություն:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ ծնունդ:



ՏԵՐ ՄԱԿԱՐ ՎԱՐՈՎՊԵՏ ՀԱԿՈՒՅԱՆ

Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ

Սյունյաց թեմի և Թեմական խորհրդի հավատավոր կազմակերպիչ:

մի անունից մեր ջերմ շնորհավորանքն ենք բերում Սյունյաց աշխարհին Ամանորի և Հիսուս Քրիստոսի Սուրբ ծննդյան ու Աստվածահայտնության տոների առթիվ: 2015 թվականը խորհրդանշվեց համայն աշխարհի ու մարդկության համար բարոյ ու հակասական իրադարձություններով: Ուստի թող երիցս բարի լինի 2016 թվականի գալուստը՝ սկսյալ «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» հրաշագործ ավետիսով: Թող Նոր տարին սեր ու խիճ, բարեկեցություն և հոգեւոր անդրդր բերի հայ ժողովրդին, նաեւ՝ անխախտ հավատ, որ վաղվա օրը ավելի լավ է լինելու: Թող խաղաղություն տիրի բոլորիս հոգիներում և հայրենիքիս սահմաններին:

Շնորհավոր Նոր տարի և Սուրբ ծնունդ:



ՎՈՐԱՆ ԳԵՎՈՐՈՅԱՆ
Քաջարանի քաղաքապետ

Սիրելի՛ քաջարանցիներ
Ավարտին է մոտենում 2015 թվականը՝ պատմության էջերում թողնելով տարվա ընթացքում ունեցած ձեռքբերումներն ու հաջողությունները, ինչու չէ՞, նաեւ բացթողումներն ու թերացումները: Այս օրերին մեզանից յուրաքանչյուրը փորձում է հետադարձ հայացք ձգել անցնող տարվան, ամփոփել արվածն ու կազմել նոր ծրագրեր գալիք տարվա համար: Վստահորեն կարող եմ ասել, որ 2015-ի համար նախատեսված սոցիալական, մշակութային, մարզական ծրագրերը համակարգված և արդյունավետ աշխատանքի շնորհիվ հաջողությամբ կյանքի

են կոչվել, որոնց իրականացման գործում զգալի դերակատարություն է ունեցել նաեւ Ձանգեզուրի պղնձամուղիբղենային կոմբինատը:

Անկասկած, նոր տարվան առանձնակի ջերմությամբ ու ակնկալիքներով սպասում ենք բոլորս: Եթե անցնող տարին աշխատանքների ամփոփման, հանրագումարի և եզրակացությունների վերջնադուր է, ապա գալիք տարին նոր նպատակների ու ծրագրերի իրականացման հերթական հնարավորությունն է ընձեռում: Ուստի, գալիք 2016 թվականին ես մենք շարունակելու ենք կիսատ թողած աշխատանքները, ինչպես նաեւ կյանքի կոչված համայնքի զարգացմանը միտված նոր ծրագրեր:

Շնորհավորում եմ բոլորիդ, մաղթում առողջություն, սեր և բարեկեցություն: Թող 2016 թվականը լինի գեղեցիկը տեսնելու և զննատեսելու, առողջության, մեր երկրատես մաքառումների արդյունքների ճաշակման, չիրագործված հույսերի իրականացման, համերաշխության և սիրո տարի: Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել սահմանին կանգնած յուրաքանչյուր զինվորի, Ամանորի գիշերը հերթապահություն իրականացնող ծառայությունների աշխատակիցներին և Ձանգեզուրի պղնձամուղիբղենային կոմբինատի ողջ անձնակազմին: Տա Աստված, որ իրականություն դառնան բոլորիս բարի ցանկություններն ու սպասումները: ■



ՏԻԳՐԱՆ ՓԱՐՎԱՆՅԱՆ

Առաջին բանակային կորպուսի հրամանատար, գնդապետ

Սիրելի՛ զինծառայողներ

Առաջին զորամիավորման փառահեղ տարեգրությունը հարստացավ եւս մեկ տարով: Արժեւորելով անցած տարին՝ կարող եմ հպարտությամբ ասել, որ զորամիավորման ենթակա ստորաբաժանումները հաջողությամբ կատարեցին 2015թ. համար նախատեսված բոլոր ծրագրերը: Մասնավորապես՝ բարձր արդյունքներով անցկացվեցին մի շարք հրամանատարաշտաբային, մարտավարական զորավարություններ՝ ենթակա զորամասերի, զորախմբերի մասնակցությամբ, որոնցում կարելու տեղ զբաղեցրեց անմխաղեպ և լայնամասշտաբ «Շանթ» զորավարությունը, և որին ծանրակշիռ մասնակցություն ունեցան և հիանալի արդյունքներ արձանագրեցին նաեւ մեր կայազորի զինծառայողները:

Ավարտվող 2015 թվականը դարձավ խաղաղության եւս մեկ տարի ինչպես ողջ հայ ժողովրդի, նրա հզոր բանակի, այնպես էլ մեր զորամիավորման համար: Պետք է ուրախությամբ արձանագրել, որ ամեն ակնթարթ զորամիավորումն իր քիկուքում ունեցել է սյունյաց ժողովրդի պատրաստակամությունն ու աջակցությունը, ոգեւորել մեզ իր քաջությամբ և բանակին՝ նվիրվածությամբ:

Առաջին զորամիավորումը Սյունիքի մարզի անբաժանելի մասն է դարձել, համախումբ և միանական է նրա ժողովրդի հետ, և անցած՝ 2015 թվականին ձեռք բերած բոլոր հաջողություններն էլ ընդհանուր են:

Դրա վառ վկայությունն են ուսումնական տարվա ընթացքում տարածաշրջանի ազգաբնակչության հետ համատեղ անցկացված մի շարք մի-

ջոցառումները, ուսանողների և դպրոցականների հետ կայացած ուսանելի, բանակ-հասարակություն կապերն ամրապնդելուն միտված հանդիպումները, տարբեր՝ Անկախության, համաքաղաքային և այլ տոների ժամանակ՝ քաղաքի հրապարակներում անցկացված մեր զորահանդեսները: Հպարտ եմ և ուրախ, որ մեր զորամիավորումը տեղակայված է Սյունիքի մարզում, որի արմատները հերոսական Սյունիքի դարերի մեջ են մխրձված, իսկ սարքերը հերոսական Սյունիքի դարերի մեջ են մխրձված, իսկ սարքերը հերոսական Սյունիքի դարերի մեջ են մխրձված, իսկ սարքերը հերոսական Սյունիքի դարերի մեջ են մխրձված:

Շնորհավորելով կայազորի բոլոր զինծառայողներին, Սյունիքի ողջ ժողովրդին Ամանորի և Սուրբ ծննդյան տոների կապակցությամբ բարենախոսում եմ բոլորիս ընտանիքներին խաղաղություն, ամուր առողջություն և երջանկություն:

Միաժամանակ, այս տոնական առիթով բոլորիս պարտքն է հիշել հայրենիքի համար սրբացած մեր հերոսներին՝ հանուն հայրենիքի զոհված մեր հայրերիներին և լույս ու խնկարկուն մաղթել նրանց հիշատակներին:

Փառք ու պատիվ նրանց անմար հիշատակին:

Թող իր հպարտ լեռների պես մշտապես անասան և ամուր մնա սյունյաց դարպասը, սյունեցին հարատեւ լծվի խաղաղ և շինարար կյանքի:

Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, դիմելով զինվորին, ասել է. «Այսօր խաղաղություն է միմիայն այն պարտաճառով, որ դուք հիմա գտնվում եք շարքում: Բացի դրանից, թշնամին գիտե, որ դուք պատրաստ եք ցանկացած պահի պատասխանել ցանկացած ոտնձգության, համոզված է, որ ստանալու է արժանի հակահարված»:

Թող բոլորս մշտապես գտնվենք շարքում:

Շնորհավոր բոլորիս Ամանորը: Բարի երթ անցնող 2015 թվականին և բարի գալուստ նոր տարուն: Համոզված եմ, որ հերոսական մաքառումով նվաճած խաղաղությունն այսուհետ ևս կպահպանենք մեր մարտունակ, օրեօր էլ ավելի հզորացող բանակի, մեզանից յուրաքանչյուրի ջանքերի և նվիրվածության շնորհիվ:



ԼԻԼԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆ.

«Եթե ավագ դպրոց ընդունվելու մեխանիզմը չմշակվի, ապա գոնե հասարակության համար ավագ եւ միջնակարգ դպրոցների միջեւ էական տարբերություն գտնելը դժվար կլինի»

Հանրակրթություն

Կրթության ոլորտում կատարվող փոփոխությունների, մասնավորապես ավագ դպրոցի ձևավորման եւ զարգացման ընթացքին պարբերաբար անդրադարձել ենք, բայց քանի դեռ հասարակության մեջ շարունակում են գերակշռող մնալ իրարամերձ կարծիքները, ուստի որոշեցինք գրուցել Կապանի N2 ավագ դպրոցի պատմության ուսուցչուհի, «Տարվա լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի 2012թ. հաղորդ, Կրթության ազգային ինստիտուտի Կապանի մասնաճյուղի պատմության եւ հասարակագիտության մասնագետ եւ վերապատրաստող ուսուցիչ, 1-ին աստիճանի տարակարգված ուսուցիչ Լիլիթ Առաքելյանի հետ: Ավագ դպրոցներ հիմնելիս առաջնային խնդիրներից էր համարվում կրկնուսուցման վերացումը, որ գործող ծրագրերի եւ շտեմարանների պահանջների առկայության դեպքում ոչ միայն չի վերանում, այլև շարունակում է գերակայել: Վերջերս նույնիսկ հրապարակումներ եղան այն մասին, որ քոլյուատրելի համարվի կրկնուսուցումը, միայն թե դասապրոցեսից հետո կազմակերպվի, իսկ ուսուցիչներն էլ մտնեն հարկային դաշտ: Բայց ավագ դպրոցի լիարժեք կայացման ճանապարհին, բացի վերոնշյալից, կան մի շարք այլ խոչընդոտներ, որոնց հարկ ենք համարում եւս մեկ անգամ անդրադառնալ:

– Ի՞նչ առաքելությամբ ստեղծվեց ավագ դպրոցը:
– Հանրակրթության բնագավառում սկսված բարեփոխումների կետերից մեկն էլ ավագ դպրոցի ստեղծումն էր, որ նպատակաուղղված էր կրթության որակի եւ արդյունավետության բարձրացմանն ու արդիականացմանը, կրթության բուսականության կատարելագործմանը: Այսօր ավագ դպրոցը նախամասնագիտական կրթություն ապահովող հիմնական օղակն է, որի գործունեությունից էլ մեծապես կախված են սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշումը եւ հետագա ուսումնառության հաջողությունը: Ինչու չէ, ավագ դպրոցի ձևավորումը նաեւ ժամանակի պահանջ էր. ծնողները դժգոհում էին, որ երեխաները, ընդհանուր միջնակարգ կրթություն ստանալով, չեն կարողանում ճիշտ մասնագիտական կողմնորոշում ունենալ, ուստի անհրաժեշտ էր ներդրել առանձին ավագ դպրոցի համակարգը, որտեղ սկսվեցին իրականացվել այդ կրթական ծրագրերը՝ համապատասխան հոսքային ուսուցմամբ, որը հնարավորություն է տալիս երեք առարկա



խորացված ուսումնասիրել: Ավագ դպրոցի առավելություններից է նաեւ սովորողներին ինքնուրույն կյանքին, նրանց հակումներին, կարողություններին, ընդունակություններին համապատասխան նախնական միջին կամ բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու հնարավորության ընծեռումը, ինչպես նաեւ աշխատանքի շուկա մտնելու նախապատրաստումը:

– Ի սկզբանե տարանջատվել էին ավագ դպրոցի կայացման փուլերը, թե՞ այն ներդրվեց ճանապարհին առաջացած խնդիրներն աստիճանաբար հաղթահարելով՝ մինչեւ կայացման հասնելը:

– Ոչ, նմանատիպ փուլային տարանջատում չի եղել: Եթե սկսենք ուսուցչական համակարգից, պիտի նշենք, որ ավագ դպրոցում պիտի ներառվեն տարակարգ, ինչպես նաեւ գիտական աստիճան ունեցող մասնագետներ, ովքեր հնարավորինս պիտի խթանեն հետաքրքրությունն ուսուցանվող առարկայի հանդեպ: Երբեք առաջ էին քաշում այն վարկածը, որ հիմնական դպրոցի ուսուցիչը կարող է ավագ դասարանի աշակերտի հետ աշխատելու խնդիր ունենալ: Բայց եւ այն կարծիքն է, որ միջնակարգ դպրոցում սովորող աշակերտը, հիմնական եւ ավագ դասարաններում սովորելով միեւնույն ուսուցչի մոտ, ավելի հեշտ է հարմարվում նրա պահանջներին եւ ուսումնառության ընթացքում ավելի մեծ հաջողություններ գրանցում, քան տարանջատված դպրոցներում՝ մի դպրոցից մեկ այլ դպրոց գնալով:

– Եթե հոգեբանական առումով դիտարկենք հարցը, աշակերտի համար տարիքային ամենաբարձր անցումային շրջանում նա հայտնվում է այլ միջավայրում, որտեղ «իրերի նոր դասավորություն» պիտի տեսնի ունենա: Արդյո՞ք սա մեծ խոչընդոտ չի ստեղծում ուսուցչի, աշակերտի, տնօրենության համար. աշակերտը, մինչեւ հարմարվում է նոր միջավայրին, դպրոցն ավարտում է:

– Ձեր նշած երեւոյթը բավականին խնդիրներ է ստեղծում. աշակերտի կայացման ամենապատասխանատու տարիքում տարբեր դպրոցներից գալիս են ավագ դպրոց, որտեղ պիտի նորովի ինքնահաստատվեն՝ ով ինչպես կարողանա: Հաճախ մինչ բուն ուսուցման գործընթացին անցնելն ուսուցիչը, նախնառաջ, դժուար է աշակերտի դաստիարակության խնդիրը, քան կրթության որակի ապահովումը: Ավագ դպրոցի թերություններից մեկն էլ այն է, որ այստեղ հայտնվում են աշակերտներ, ովքեր չեն գիտակցում, թե ինչու են եկել ավագ դպրոց: Հիմնականում 35-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք: Հանրակրթության մասին օրենքում եւս որեւէ սահմանափակում չկա այն առումով, թե երեխան որտեղ կարող է ստանալ կամ շարունակել կրթությունը: Ծնողն ու աշակերտն են ընտրում իրենց նախընտրած դպրոցը եւ շարունակում ուսումնառությունը, ուստի որեւէ դպրոց չի կարող սահմանափակում կիրառել եւ սիրով չընդունել իրենց դիմած աշակերտին՝ անկախ նրա ունեցած գիտելիքից ու կարողությունից: Սակայն ամբողջ խնդիրն այն է, որ ավագ դպրոց մտնող աշակերտը չպետք է շահարկի իրավունքը հասկացությունը եւ բարձրաձայնի. «Ես կսովորեմ այնտեղ, որտեղ կցանկանամ», այլ պետք է հասկանա՝ եթե սովորում է ավագ դպրոցում, ունի որոշակի լրացուցիչ պարտականություններ. պետք է ենթարկվի տվյալ դպրոցի ներքին կարգապահական կանոններին, ուսուցիչների պահանջներին եւ պետական կրթական չափորոշիչներով իրականացնի ուսումնառությունը:

Ինչ վերաբերում է նոր միջավայրին հարմարվելուն, եթե հետադարձ հայացք ձգեն, պետք է նշեն, որ հատկապես տղաների շրջանում առաջացող տարածայնությունները ներկայումս այնքան էլ սուր բնույթ չունեն. առաջին տարիներին մասնաբաժնի մեջ ներառվելու, այսօր ավելի հեշտ են հարմարվում, քանի որ

նրանք գիտակցաբար են մոտենում այն հարցին, որ հիմնական դպրոցն ավարտելուց հետո այլ դպրոց կտեղափոխվեն: Սա իր առավելությունն էլ ունի. երեխան ինքնուրույն հարմարվում է նոր միջավայրին եւ ինքնահաստատվում: Կյանքի ժամանակակից պայմաններում պետք է պատրաստ լինել հարմարվելու ցանկացած իրավիճակի: 21-րդ դարի կրթության հիմնական նպատակը հետեւյալն է՝ կարողանալ ապրել, կարողանալ աշխատել, կարողանալ ապրել միասին, կարողանալ սովորել: Կյանք մտնող պատանին պետք է պատրաստ լինի համագործակցության, ինքնուրույն գործունեության եւ հանդուրժողականության, քանզի մեր իրականության մեջ զգացվում է մտրոկային առողջ փոխհարաբերությունների պակաս, ուստի ուսուցիչներին խնդիրն է աշակերտների ճիշտ ուղղորդումն այդ չափանիշներին համապատասխան:

– Ներկայումս որո՞նք են ավագ դպրոցի առաջ ծառայած հիմնական խնդիրները:
– Ավագ դպրոց ընդունվելու համար անհրաժեշտ է մշակել ընդունելության մեխանիզմ: Իմ կարծիքով՝ 12-ամյա պարտադիր կրթության համակարգի ներդրման դեպքում փոփոխություն կկատարվի նախնառաջ ավագ դպրոցի ընդունելության հարցում, որովհետեւ երեխաները երբեք չեն այնպիսի մասնագիտական հոսքեր, որոնց մասին գաղափար չունեն: Ընտրելով հոսքը՝ աշակերտը, բացի նախընտրած առարկաներից, հրաժարվում է սովորել մյուս առարկաները: Դեռեւս չի ձևավորվել այն գիտակցումը, որ հանրակրթական որոշ առարկաների ուսումնասիրումը պարտադիր է՝ պայմանավորված պետական ավարտական քննությունների հետ: Օրինակ՝ տնտեսագիտական հոսքում սովորողը կարծում է, որ պատմություն կամ հասարակագիտությունն առարկան երկրորդական է եւ պարտադիր չէ այն սովորել՝ առանց գիտակցելու, որ որպես մեր պետության վաղվա քաղաքացի՝ նա պետք է իր քաղաքական եւ քաղաքացիական իրավունքներն ու պարտականություններն իմանա, քաղաքական տարբեր իրավիճակներում ճիշտ կողմնորոշվելու համար դասեր քաղի հայոց պատմությունից. չէ՞ որ պատմությունն անընդհատ կրկնվում է, պարզապես փոխվում են դերակատարները: Մյուս խնդիրն ավագ դպրոցում աշակերտի թվով ֆինանսավորումն է, երբ մեծ թվով աշակերտների ընդունելություն է կատարվում՝ անկախ նրանց ունեցած գիտելիքներից եւ կարողություններից: Երբեք հոսքային դասարաններն աշակերտների համապատասխան թվաքանակի պակասի պատճառով չեն կայանում, ուստի անհրաժեշտ է ավագ դպրոցում վերացնել աշակերտի թվով ֆինանսավորման սկզբունքը՝ փոխարենը մտցնել ֆինանսավորման այլ տարբերակ՝ աշակերտների թվաքանակի հետ կապ չունեցող: Ընդունելությունը պետք է կատարել համաձայն հարցազրույցի կամ թեստավորման արդյունքի, որպեսզի ավագ դպրոց մուտք գործող աշակերտը գիտակցի՝ ուսուցչի խնդիրը դասապրոցեսում զգոնության եւ կարգապահության հարցերով զբաղվելը չէ, այլ սովորողին գիտելիք հաղորդելը եւ որակյալ կրթություն ապահովելը: Ոչ յոթ համար գաղտնիք չէ, որ այսօր աշակերտները չեն ցանկանում աշխատել տանը. լայնացել է նրանց հետաքրքրությունների շրջանակը, դասագրքերում գետնկապ ծավալումն տեսական մյուսի պատճառով օտարվում են այն առարկաների ուսումնառությունից, որոնք իրենց նախամասնագիտական կողմնորոշմանը չեն առնչվում: Որակյալ կրթության ապահովման պահանջ

ներից մեկն էլ այն է, որ աշակերտը դպրոցում պետք է նոր դասարանները յուրացրած տուն գնա, իսկ տանն արդեն զբաղվի որոնողական, հետազոտական աշխատանքով՝ դպրոցում ստացած գիտելիքը հարստացնելու համար: Չնայած նրան, որ բոլոր դպրոցների ուսուցիչներն անցել են առարկայական նախա-տեստացիոն վերապատրաստման դասընթացներ, քննարկել դասին ներկայացվող որակական պահանջները, ծանոթացել ժամանակակից մեթոդներին եւ հնարներին, սակայն չեն կարողանում ձեռքբազատվել դասավանդման ավանդական մեթոդներով աշխատելուց: Դասի ընթացքը փուլերով տարանջատելիս, խթանման փուլում անդրադարձ կատարելով հին դասարանին, իմաստի ընկալման եւ կշռադատման փուլերում պետք է իրականացվեն նոր մյուսի յուրացումը եւ ամրապնդումը:

– Երբ ստեղծվեցին ավագ դպրոցները, ամենից շատ խոսեցին կրկնուսուցման վերացման մասին: Ոչ մեկի համար էլ գաղտնիք չէ, թե ծնողը ֆինանսական ինչպիսի խնդիրների առաջ է կանգնում կրկնուսուցից վճարելու համար, մանավանդ մեր օրերի սոցիալական ծանր պայմաններում: Բայց մյուս կողմից էլ առանց լրացուցիչ պարապմունքի հրավերի չէ բարձր միավորների ընդունվել բուհ: Ստացվում է, որ հոսքային առարկաներին տրված լրացուցիչ ժամաքանակն իր գլխավոր նպատակին չի ծառայում:

– Մեր հասարակությունը դեռեւս գիտակցաբար չի մոտենում այն հարցին, որ երեխան դպրոցում ստացած գիտելիքներով պետք է ընդունվի բուհ: Այստեղ միայն ծնողի, աշակերտի, դպրոցի խնդիրը չէ: Խնդիրը բուհ ընդունվելու համար ներկայացվող առարկայական գիտելիքների իմացության ծավալումն ու բարոյությունն է: Անգամ գերազանց առաջադիմություն ունեցող աշակերտը խոստովանում է, որ առանց կրկնուսուցիչի չի կարող բարձր միավորներով ընդունվել բուհ եւ լավ մասնագետ դառնալ: Ընտանիքային պահանջները ծավալում են, դասագրքում տրված մյուսը երբեք բավականին խրթին է լինում եւ առանց լրացուցիչ ու մատչելի բացառություն հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: Բնական է, շտեմարանների կազմված են դասագրքերին համապատասխան, սակայն աշակերտներին չի հաջողվում ինքնուրույն հաղթահարել ծավալում մյուսի յուրացումը: Կրկնուսուցումը բոլոր ժամանակներում էլ, նույնիսկ Հին Հունաստանում, արդիական է եղել եւ դժվար է արմատախիլ անել:

Նախ՝ ծնողը մտածում է իր երեխային համապատասխան գիտելիքներով զինված ուղարկել բուհ, իսկ բուհն էլ իր հերթին պետք է ընդունելության համար ներկայացվող գիտելիքի պահանջները թեթևացնի: Դուք մի կարծեք, թե ուսուցիչն ուրախությամբ է կատարում այդ աշխատանքը, որն իրենից խլում է նախնառաջ առողջությունը, ապա ժամանակը, որը կարող է տրամադրել իր ընտանիքին, նախասիրություններին, մասնագիտական գիտելիքների կատարելագործմանը, գիտական աշխատանքին: Ինչո՞ւ ուսուցիչը չպետք է ըստ արժանվայն գնահատվի, սոցիալապես եւ ֆինանսապես ապահովված լինի. սոցիալական խնդիրներն են ստիպում նրան զբաղվել կրկնուսուցմամբ: Կորեական պատերազմից հետո (1950-1953թթ.) Հարավային Կորեան համաշխարհային բանկից ատացված զգալի գումարը ներդրեց կրթության բնագավառում: Այստեղ նախընտրեցին 5-10 տարի քայքայված տնտեսություն ունենալ, բայց



ՀԱՂՈՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քաղաքացիական գործ է հարուցվել Մարինե Պավլուշայի Տիգրանյանի կողմից Արամ Արեթի Օսիպյանին անհայտ բացակայող ճանաչելու պահանջի մասին:

Բոլոր այն անձանց եւ կազմակերպություններին, որոնք տեղեկություններ ունեն քաղաքացի Արամ Արեթի Օսիպյանի (հաշվառված ք.Կապան, Բաղաբերդի 10/27 հասցեում) գտնվելու վայրի մասին, խնդրվում է հայտնել Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարան՝ ք.Կապան, Մելիք-Ստեփանյան 3/2, հեռախոս (0285 5-29-59):

Դատավոր՝ Ա.Թումանյան

ՀԱՂՈՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի վարույթում է գտնվում թիվ ՍԴ2/0461/02/15 քաղաքացիական գործում՝ ըստ Երանուհի Վարազդատի Հովսեփյանի ներկայացուցիչ Լիանա Գրիգորյանի դիմումի «Քաղաքացի Վարազդատ Վանկի Հովսեփյանին անհայտ բացակայող ճանաչելու» պահանջի մասին:

Խնդրվում է բոլոր քաղաքացիներին եւ կազմակերպություններին Վարազդատ Վանկի Հովսեփյանի (ծնված 15.07.1972 թվական, վերջին հայտնի բնակության վայրը՝ ՀՀ Սյունիքի մարզ, քաղաք Կապան, Սպանդարյան փողոցի թիվ 1ա շենք, բնակարան 53) վերաբերյալ հայտնի տեղեկությունները տրամադրել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան (ք. Մելիք, Ջորավար Անդրանիկի փողոցի թիվ 24/1 հասցեում) կամ զանգահարել 0286-4-22-92 հեռախոսահամարով:

Դատավոր՝ Ժ.Ասատրյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ Սյունիքի մարզի «Պողոս Տեր-Ղազարյանի անվան Վերին խոտանանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի պատմության ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման, համապատասխան դրույքաչափով:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր (համրակրթական ծրագրերին համապատասխան) եւ հարցազրույց (մանկավարժական, մասնագիտական գործնական հմտություններ): Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

- Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին նա հավակնում է (ծե 1),
- Բարձրագույն կրթության մանկավարժության որակավորման աստիճանը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) կամ վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական կամ ուսուցչական գործունեության առնվազն հինգ տարվա աշխատանքային ստաժը հաստատող քաղվածք աշխատանքային գրքուկից,
- Անձնագրի պատճենը,
- Ինքնակենսագրություն (ծե 4),
- Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
- Մեկ լուսանկար 3x4 չափի,
- Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունք,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքուկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2016թ. հունվարի 22-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9.00-15.00, բացի շաբաթ եւ կիրակի օրերից:

Փաստաթղթերի ընդունումը՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա 2016թ. հունվարի 25-ին՝ ժամը 14.00-ին Վերին խոտանանի միջն. դպրոցում: Հասցեն՝ Սյունիքի մարզ, գյուղ Վերին խոտանան, 5-րդ փողոց, շենք 25: Տեղեկությունների համար զանգահարել (0285) 6-05-43, (093) 41-73-95:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկայի (4.75 դասաժամ), պատմության (17 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծե1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Համրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ծե 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքուկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրատարակման օրվանից մինչեւ 2016թ. հունվարի 25-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 9-ից 14-ը, բացի շաբաթ, կիրակի եւ տոնական օրերից:

Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 1-ին ժամը 15:00-ին Կապանի թիվ 11 միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Կավարտ բանավան 124:

Տեղեկությունների համար զանգահարել 2-46-37 հեռախոսահամարով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Աշտուվանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզիկուլտուրայի (19,25 ժամ) եւ ինֆորմատիկայի (9,25 ժամ) ուսուցչի թափուր տեղերի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր, ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:


Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծե 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Համրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ծե 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Երկու լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքուկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ: Փաստաթղթերն ընդունվում են մինչեւ 2016թ. հունվարի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Աշտուվանի միջնակարգ» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 5-ին՝ ժամը 12:00-ին, «Աշտուվանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում: Տեղեկությունների համար զանգահարել՝ 098 58 58 48 հեռախոսահամարով:

Լիլիթ Առաքելյան. «Եթե ավագ դպրոցը ընդունվելու մեխանիզմը չմշակվի, ապա գոնե հասարակության համար ավագ եւ միջնակարգ դպրոցների միջեւ էական տարբերություն գպնելը դժվար կլինի»

Եջ 7  վառում, որը կարծրացնի դպրոցի եւ ուսուցչի հեղինակությունը, կրթության որակը եւ երեխաների գիտակցական մակարդակը:

– **Հանախ կարելի է լսել, որ աշակերտը լավ չի սովորում, չի սիրում դպրոցը:**

– Այս հարցին միանշանակ պատասխանել չի կարելի, քանի որ գործոնները տարբեր են: Երեխան դպրոցից հետո առնվազն 4-5 աստղաբաշխական ժամ պետք է տրամադրի հաջորդ օրվան նախապատրաստվելուն, բայց նա ոչ միայն չի ցանկանում այդ ժամանակը տրամադրել, այլևս չի հասցնում. չէ՞ որ նա պետք է հասնի ժամանակի հետեւից: Երեխան սիրում է հաճախել դպրոց, այլ է խնդիր՝ սիրո՞վ է բացում դասագիրքը, պատրաստվում դասին: Ավագ դպրոցի կայացմանը մեծապես խանգարում են նաեւ այն աշակերտները, ովքեր դպրոց են գալիս միայն ժամանակ անցկացնելու համար՝ ուսումնառությունը հետին պլան մղելով:

– **Ինչպիսի՞ ակնկալիքներ ունեք կրթության բարեփոխման համար, արդյո՞ք դրանք կհասցնեն**

ցանկալի հանգրվան:

– Իմ կարծիքով՝ ավագ դպրոցը կկայանա, կրթական համակարգի բարեփոխումների արդյունքում կունենանք մեր երագած դպրոցը, որտեղ համապատասխան միջավայր կստեղծվի հաճելի ու հետաքրքիր ուսումնառության համար: Աշակերտը կգիտակցի, որ ավագ դպրոց է գալիս նախաձեռնաբար որակյալ կրթություն ստանալու համար, որը կնպաստի հետագայում նախաձեռնաբար կյանքի կրթությանը: Պետությունը պետք է հասնի նաեւ նրան, որ ուսուցչի համար յուրահատուկ վերաբերմունք ձեւավորվի հասարակության մեջ: Այսօր հազվադեպ աշակերտ է ցանկանում ուսուցիչ դառնալ: Հուսանք՝ կհասնենք այն օրվան, որ դպրոցը կդառնա կարելիորագույն օղակ, որտեղ աշխատելու համար տասնյակ մասնագետներ կմասնակցեն մրցույթին: Մեր ապագան դպրոցի ձեռքում է, ուսուցչին զինիր անհրաժեշտ միջոցներով, նյութապես ապահովվիր, գրագրության բեռն ուսերից թեթևացրու, եւ կրթության որակը կբարձրակարգվի:

Հարցազրույցը՝ ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ «Տոլորսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ուսուցչի թափուր տեղի համար: Ուսուցչի պաշտոնի համար նախատեսված վարձատրությունը որոշվում է ըստ դասաբաշխման:

Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր եւ բանավոր, ըստ ՀՀ ԿԳ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի:

Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում.

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (ծե 1),
2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,
3. Անձնագրի պատճենը,
4. Ինքնակենսագրություն (ծե 4),
5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),
6. Երկու լուսանկար՝ 3x4 չափի,
7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքուկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրատարակման օրվանից մինչեւ 2016թ. հունվարի 29-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից: Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի ըստ կարգի «Տոլորսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Մրցույթը տեղի կունենա փետրվարի 5-ին՝ ժամը 12:00-ին, «Տոլորսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում: Տեղեկությունների համար զանգահարել՝ 077 05 58 06 հեռախոսահամարով:

Սյունյաց երկիր

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՎ ՀՐԱՄԱՐԱԿԻՉ
«ՍՅՈՒՆՅԱՑ ԱՆԵՍԱՐ»
ՍԱՀՄԱՄՈՒԿ ՊԱՏԱՊԱՆԱՏՎՈՒԹՅԱՄ ԸՎԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝
ՍԱՍՎԵԼ ԱՆԵՍԱՆՅԱՆ

Հասցե՝ Հեռ.՝	Կապան, Շահումյան 20/32: (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47:
Էլ. փոստ՝ Էլ. կայք՝	syuniacyerkir@mail.ru www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր կիճակում (3 մեքենագիր էջից ոչ ավելի):

«ԳՈՎԱԶԴ - ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է:

ՇՆՆՆՆՆՆ ՌՆՆՆՆՆ ՈՒՍՎԱԿԱՆ ԵՆ ԳՈՎԱԿԱՆ ՆՅՈՒՅԵՐ: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2: Պետական արտատպություն՝ տարեկան 500 000 ՀՀ դրամ:

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրմանը՝ 1700, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 28.12.2015թ.: